362
Տ-30

ՏԵՂԵԿԱԳԻՐ

**ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ V-Ի**

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՒՈՂ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԿՈՄԻՏԷԻ

*Սկսած 1914 թւի Հոկտեմբերի 5-ից մինչեւ 1915 թւի
յուլիսի 1-ը*

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան «ԷՊՕԽԱ» Մուզ. պեր. № 8.
1915

362
Ш-30
MAR 2010

ՏԵՂԵԿԱԳԻՐ

**ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ V-Ի**

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆԻՈՂ

1006
29644

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԿՈՄԻՏԷԻ

Սկսած 1914 թւի Հոկտեմբերի 5-ից մինչեւ 1915 թւի յուլիսի 1-ը

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան «ԷՊՕԽԱ» Մուզ. պեր. № 8.
1915

13 AUG 2013

43.349

Երբ բռնկուում է համաեւրոպական պատերազմը և Ռուսաստանում էլ զօրաժողով է հրատարակուում, պատերազմից վնասուածների օգնութեան գործը կանոնաւորելու և հայ ազգը այդ գործում իբրև մի ամբողջութիւն ներկայանալու համար Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութեան նախաձեռնութեամբ և Կովկասի Փոխարքայի թոյլտուութեամբ 1914 թուի սեպտեմբերի 14-ին նոյն ընկ. դահլիճում կայանում է մի համագումար, որին ներկայ են լինում Բարեգործական Ընկերութեան ճիւղերի և հայ կրթական կուլտուրական հիմնարկութեանց ներկայացուցիչները։

Այդ համագումարի հետեւանքն այն է լինում, որ օգնութեան գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար կազմուում է Հայկական Կենտրոնական Կոմիտէն, 24 անդամից բաղկացած, որոնցից 12-ը ընտրուում են Թիֆլիսում, իսկ 12-ը՝ Բագուում։

Կոմիտէն իր գործունէութիւնը սկսում է 1914 թուի հոկտեմբերի 5-ից։ Նա իր գործունէութեան առաջին շրջանում ծրագրում է կազմակերպել պահեստի աղքատ զինուորների ընտանիքների ապահովութեան և վիրաւոր զինուորների օգնութեան գործը։ Բայց շուտով սկսւում է ռուս-տաճկական պատերազմը և բազմաթիւ հայ ընտանիքներ թողած տուն ու տեղ փախչում են Կովկաս ապրիւնարբու քիւրդի և թուրքի սրից իրանց կեանքն ազատելու համար։ Կենտրոնական Կոմիտէն իր ամբողջ ոյժերով նուիրւում է փախստականների օգնութեան գործին։

Փախստականների օգնութեան գործը վերին աստիճանի լուրջ, ծանրակշիռ և շտապողական համարելով, Կոմիտէն որոշում է իր ոյժերը միացնել Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութեան հետ, մանաւանդ ի նկատի ունենալով,

որ կարիքը շատ մեծ է լինելու, իսկ իր միջոցներով չեն բաւարարելու այդ կարիքները։

Կոմիտէն Թիֆլիս հասած փախստականների օգնութեան համար տեղումս կազմում է առանձին մասնաժողով, իսկ նուէրներ ժողովելու գործը կազմակերպելու համար դիմում է Կ. Հ. Բ. Ընկերութեան ճիւղերի աջակցութեան և ուղարկում է լիազօրներ, որոնց պարտականութիւնն է լինում շրջել փախստականների վայրերը, ուսումնասիրել նրանց տնտեսական դրութիւնը, կարիքի չափը, օգնութեան ձևը, հարկաւոր դէպքում նիւթական օգնութիւն հասցնել փախստականներին և այդ բոլորի մասին մանրամասն զեկուցում ներկայացնել Կոմիտէին։

Լիազօրներից պ. Ա. Շարաֆեանը ուղարկուել է Սարիղամիշի, Բասէնի, Ջուլֆայի, Մակուայ, Ղարսի և Մանազկերտի շրջանները։

պ. Ս. Տէր-Ցարութիւնեանը Արդահանի, Արդանուշի և Օլթուայ շրջանները։

պ. Ս. Աբովեան—Վանի շրջանը։

պ. Մեքենաջեան—Իգդիրի շրջանը։

պ. Ա. Բէկզադեան—Ալաշկերտի շրջանը։

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. Բաթումի ճիւղի նախագահ Մեսրոպ աւ. ք. Մելեանը և Ա. Վերմիշեանը—Շաւշէդի և Արդւինի շրջանները։

պ. Խանոյեանը, Նազարբէգեան և Ատովմեան վերահսկիչների հետ միասին—Բորչալուի շրջանը։

պ. պ. Մամիկոնեան և Իրաւաբան Կարճիկեան—առաջինը Կարսի շրջանը, իսկ երկրորդը՝ Արդւին ուսումնասիրելու թէ տեղական չարդերը ինչ հանգամանքներում են առաջ եկել։

պ. Գ. Դեմիրչեան—Օլթիի շրջանը։

պ. Մ. Աղնաւուրեան—Արդանուշի և Արդւինի շրջանները։

Բացի այդ անձերից, Կենտրոնական Կոմիտէի և Կ. Հ. Բ. Ընկ. նախագահ պ. Ս. Ցարութիւնեանը, թէ այդ հիմարկութիւնների կողմից և թէ իրը անդամ ու

լիազօր Կովկասի Գլխաւոր Կոմիտէի, որը գտնուում է Կոմսուհի Ե. Ա. Վորոնցովա-Դաշկովի նախագահութեան տակ, շրջել է գաղթականական վայրերը՝ Ալէքսանդրապոլ, Կարսի նահանգը, Ախալքալաքի գաւառը և Բաթում, գաղթականների օգնութեան գործը կանոնաւորելու համար։ Իսկ Մեսրոպ եպիսկոպոսը գնացել է Բորչալուի շրջանը Կարսից գաղթող փախստականների ընդունելութեան գործը կանոնաւորելու համար։

Կոմիտէն իր լիազօրների միջոցով փախստականների օգնութեան գործը կազմակերպելով այն վայրերում, որտեղ գտնուում են փախստականները, այնուհետև սկսում է օգնել նրանց բաժանելով դրամական պարբերական և միանուագ նպաստներ, շորեր, մթերքներ։

Պատրաստել է տուել բաւականին թուով անկողին, հագուստեղէն և ուղարկելով զանազան վայրեր, բաժանել է կարիքաւոր փախստականներին։ Ուղարկել է նաև բուրդ, թել, կտորեղէն և այսպիսով փախստականներն իրանք պատրաստել են իրանց համար գուլպաներ և զանազան հագուստեղէն։

Ուղարկել է փախստականների վայրերը ալիւր, շաքար, թէյ և այլն մթերքներ և իր լիազօրների և այլ անձանց միջոցով բաժանել է փախստականներին։

Փախստականների համար գտել է զանազան աշխատանքներ և իր նպատակն է դրել աշխատել, որպէսզի, ինչքան կարելի է, փախստականները իրանց սեփական աշխատանքով ապրեն իրենց գտնուած վայրերում։

Այդ նպատակով Թիֆլիսում էլ բաց է արել մի լաբորատորիա, որտեղ աշխատում են բազմաթիւ փախստական կանայք և աղջիկներ և լուանում են Կ. Հ. Բ. Ընկերութեան հիւանդանոցի սպիտակեղէնները։

Իր լիազօրների միջոցով Կոմիտէն փախստականներին տեղաւորել է զանազան վայրերում, գտնելով յարմար բնակարաններ և ապրելու համար ստեղծելով որոշ յարմարութիւններ։

Փախստականների քայքայուած տնտեսութիւնը վերա-

կանգնելու համար ուղարկել է երկրագործական գործիքներ, սերմացու և այդ նպատակով 14,000 ր. է յատկացրել փախստականների քայքայած տնտեսութիւնը վերականգնող Կոմիտէին, որ կազմւած է Գիւղատնտեսական ընկերութեան կից Հայկական Կենտրոնական Կոմիտէի, Կովկ. Հայոց Բարեգործական և Գիւղատնտեսական ընկերութեանց ձեռներէցութեամբ։

Կոմիտէի բոլոր լիազօրներն էլ իրանց զեկուցումների մէջ առանձնապէս շեշտում են այն հանգամանքի վրայ, որ քաղցածութիւնից ու մերկութիւնից տարածւում են փախստականների մէջ հիւանդութիւններ, մանաւանդ տարափոխիկ հիւանդութիւններ, ինչպէս է բծաւոր տիֆը, որը բազմաթիւ զոհեր է տանում նրանցից։

Ի նկատի ունենալով այս բոլորը, Կոմիտէն իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է բժշկական օգնութեան վրայ։ Նրա նախաձեռնութեամբ փախստականների համար հիւանդանոցներ են բացւել Ալէքսանդրապոլում, Կարսում, Կաղզւանում, Ախալքալաքում և Տաճկական Ղարաքիլիսայում։

Ալէքսանդրապոլի հիւանդանոցի համար Կոմիտէն ուղարկել է բժ. Յակովբ Մելիք-Վարդանեանին, Կարսի հիւանդանոցի համար՝ բժ. Աւթանդիլեանին, 2 ֆելդշերով։ Հիւանդանոցում 2 ամիս մնալուց յետոյ Կոմիտէի կարգադրութեամբ բժ. Աւթանդիլեանը մէկ ֆելդշերի հետ ուղարկուեց Խորասանի, Սողանլուխի և Նախիջևանիկի շրջանները փախստականներին բժշկական օգնութիւն հասցնելու համար։

Զուլֆայի շրջանն է ուղարկել բժ. Գէորգեանին, որը մի ամիս գործելուց յետոյ զօրքի հետ անցել է Պարսկաստան։ Դրա տեղ Կոմիտէն հրաւիրել է բժ. Տէր-Յովհաննիսեանին։

Ալաշկերտի շրջանն է ուղարկել բժ. Մանդինեանին 2 ֆելդշերով և 2 սանիտարով։ Պէտք է ասել, որ այդ խումբը Ալաշկերտում եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս։ Բաց է անում հիւանդանոց, որտեղ խնամւում են

բազմաթիւ հիւանդներ։ Սակայն, դժբախտաբար, բժ. Մանդինեանը և իր խումբը տիֆով հիւանդանում են, ուստի դրանց փոխարէն Կոմիտէն ուղարկում է բժ. Սաֆարեանին 2 ֆելդշերով, որոնք գործում են Ալաշկերտի և Ղարաքիլիսայի շրջաններում։

Երբ ռուսաց քաջարի զօրքը գրաւում է Մանազկերտը, տեղեկութիւն է ստացւում, որ այդտեղ բժշկական օգնութեան մեծ կարիք կայ, ուստի և բժ. Սաֆարեանը մեկնում է Մանազկերտ, իսկ օգնականները մնում են Ալաշկերտում։

Կարսի շրջանից երբ փախստականներին փոխադրում են Բորչալուի շրջանը, բժշկական օգնութեան մեծ կարիք է զգացւում, որովհետև եկող փախստականների մէջ լինում են հիւանդներ, որոնց ընդունելու ժամանակ հարկաւոր էր առանձնացնել և առանձին խնամք տանել, որպէսզի չվարակեն տեղական ազգաբնակութեանը։

Այդ նպատակով Կոմիտէն հրաւիրում է բժ. Փիլոսեանին 2 ֆելդշերով և ուղարկում է Բորչալուի գաւառը։

Միևնոյն ժամանակ միջնորդութիւն է յարուցում իշխանութեան առաջ, որպէսի Բորչալուի բժշկական խմբի ռոճիկները տրւեն պետական գանձարանից։ Այդ միջնորդութիւնը յարգւում է իշխանութեան կողմից։

Երբ ռուսաց քաջարի զօրքը ազգանւէր հայ կամաւորների հետ միասին գրաւում են Վանը, Կոմիտէն այդ վայրերը ուղարկում է բժշկական խումբ, որի մէջ մտնում են բժիշկներ՝ Օհանջանեան, Վ. Յովհաննիսեան, Ա. Քոչարեան, (առաջինը իբր գլխաւոր բժիշկ), 2 ֆելդշեր, 3 ֆելդշերուհի, 2 մանկաբարձուհի, 2 սանիտար և մի ծառայ։

Այդ բժշկական խմբի հետ են գնում նաև լիազօրներ՝ Ա. Շարաֆեան և Կոմիտէի անդամ Ս. Աբովեան։

Խումբը նախ գնում է Էջմիածին, ներկայնում Կաթողիկոսին և նրա օրհնութիւնն առնելուց յետոյ, մեկնում են Էջմիածնից և Իգդիրում 2 մասի բաժանւում։ Մի մասը Ա. Շարաֆեանի և բժ. Վ. Յովհաննիսեանի զեկա-

վարութեամբ մեկնում է Մանազկերտ, իսկ միւսը՝ բժ. Հ. Օհանջանեանի և Ս. Աբովեանի ղեկավարութեամբ մեկնում է Վան։

Կովկասի զանազան վայրերի հետ միասին Թիֆլիս ևս եկան բազմաթիւ փախստականներ, որոնց Կոմիտէն տեղաւորել է եկեղեցիների բակերում գտնուած սենեակներում և ապրելու համար պարբերական նպաստներ է տալիս մեծերին օրական 20, իսկ փոքրերին 15-ական կոպէկ։

Թիֆլիսի գաղթականներին տեղաւորելու, նպաստներ բաժանելու և առհասարակ նրանց տնտեսական դրութեան վրայ հսկելու համար հրաւիրուած է առանձին պաշտօնեայ պ. Վարազդատ Մինասեան, որը գործում է համաձայն Կոմիտէին կից կազմուած գաղթականական մասնաժողովի հրահանգների։

Կոմիտէն աշխատել է փախստականներին վերադարձնել իրանց հայրենի օջախը, իրենց տնտեսութիւնը վերականգնելու համար։ Այդ առթիւ Կոմիտէն միջնորդութիւն է յարուցում իշխանութեան առաջ և իրաւունք վերցնում, որպէսզի փախստականներին ձրի տոմսակներ տրւին և այդ ձևով բազմաթիւ փախստականների Կոմիտէն վերադարձրել է իրենց երկիրը, իսկ հիւանդ փախստականներին Կոմիտէն յանձնարարականներ է տալիս և տեղաւորում Թիֆլիզի հիւանդանոցներում։

Փախստականներին օգնելու գործը աւելի արդիւնաւէտ դարձնելու համար Կոմիտէին կից ընտրուում է առանձին գործակից յանձնաժողով հետևեալ անձերից կազմուած. տիկ. Ս. Օգանեզեան, Հ. Առստամեան պ.պ. Ն. Արէլեան, Մ. Անանեան, Իս. Ցարութիւնեան, բժ. Բ. Աղասարեան, Ց. Շահնազարեան, Ս. Աբովեան և Աւ. Պողոսեան։

Կենտրոնական Կոմիտէն ունեցել է 47 նիստեր, որտեղ զբաղուել է զուտ փախստականների հարցերով։ Նիստերին յաճախ ներկայ են եղել Կոմիտէի լիազօրները և բժիշկները, որոնք զեկուցումներ են տուել իրենց շրջա-

գայութեան, կատարած գործունէութեան և փախստականների դրութեան մասին։

Կոմիտէի նիստերին ձայնի իրաւունքով մասնակցել են Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան կողմից տիկ. Դ. Թադէոսեան և տ. Ն. Ղամբարեան։ Գիւղատնտեսական Ընկերութեան կողմից Ա. Սահակեանց, Հորիզոնի խմբագրութեան կողմից Ա. Ղազարեան։

Ինքը Կոմիտէն իր անդամներից ձայնի իրաւունքով ներկայացուցիչներ է ունեցել Գիւղատնտեսական Ընկերութեան կից գտնուած փախստականների քայքայած տնտեսութիւնը վերականգնող Կոմիտէի մէջ պ.պ. Ս. Ցարութիւնեանց, Ա. Ղազարեան և Ի. Ցարութիւնեան։

Թիֆլիզում և Գանձակում փախստականներին օգնելու համար կազմուել են ուսուցչական կոմիտէներ, որոնք համարուել են Կենտրոնական Կոմիտէի ճիւղեր և կոչուել են «Հայկական Կենտրոնական Կոմիտէի Թիֆլիզի և Գանձակի ուսուցչական ճիւղեր»։

Կոմիտէն իր միջոցները ուժեղացնելու համար իշխանուհի Մ. Թումանեանի նախաձեռնութեամբ Թիֆլիզի Գանովսկի և Գոլովինսկի փողոցների վրայ բաց է արել «մի բաժակ թէյ» անուան տակ թէյատներ, որոնք նիւթական լաւ արդիւնք են տալիս։

Թէ առաջին և թէ երկրորդ թէյատների հաշիւները իւրաքանչիւր ամիս կառավարչուհիները ներկայացնում են Կոմիտէին։

Իր միջոցները ուժեղացնելու համար Կոմիտէն պատշաճաւոր թոյլտուութեամբ յունվարի 29 կազմակերպեց «գթութեան և ողորմածութեան» օր։ Այդ օրը բազմաթիւ օրիորդներ, տիկիններ և պարոններ, թեթեղեայ տուփերով շրջում էին Թիֆլիզի փողոցները և օրւայ խորհրդանշանը՝ «փախստական կինը գրկած երեխային» պատկերը բաժնում էին հասարակութեան և նուէրներ հաւաքում։ Այդ օրւայ ժողովարարութիւնից զուտ արդիւնք մնաց 7115 ր. 80 կ.

Սոյն տեղեկագրին կցած է Կենտրոնական Կոմիտէի հաշիւը, որտեղ մանրամասն ցոյց է տրուած թէ ստացած գումարները ինչ ձևով են ծախսուել։

Ստացած նուէրները, որ հաւասարւում է 189297 ր. 74 կոպ. գումարի, հաշի մէջ ցոյց են տրուած ի նկատի առած այն վայրերը, որտեղից ստացած են այդ նուէրները, որից պարզ կերպով իմացւում է թէ իւրաքանչիւր քաղաք կամ գիւղ ինչ չափով է օգնել Կոմիտէին։ Իսկ մանրամասն ցուցակը թէ ումից որքան է ստացուել, իր ժամանակին տպւել է «Հորիզոնի» №№ 33. 45. 94 և 154 յաւելուածներով և բաժանուել է հասարակութեանը։

Ծախսի գումարը հաւասար է 135679 ր.—58 կոպ.։

1915 թւի յուլիսի 1-ին դրամարկղում մնում է 53618 ր.—16 կոպ.։

Պատուաւոր Նախագահ՝ Մեսրոպ Եպիսկոպոս

Նախագահ՝ Ս. Ցարութիւնեան

Փոխ-նախագահներ՝ Ա. Մելիք-Ազարեան, Կ. Ալիխանեան

Անդամներ՝

Իշխ. Մ. Թումանեան	Ա. Ղազարեան
Տիկ. Ն. Ղամբարեան	Բժ. Մինասեան
» Ս. Օգանեզեան	Բժ. Բ. Աղասարեան
» Հ. Առստամեան	Ս. Խարազեան
» Դ. Թաղէոսեան	Ա. Պողոսեան
պ.պ. Ա. Խատիսեան	Ց. Շահնազարեան
Ց. Խունունց	Իս. Ցարութիւնեան
Խ. Աքրիկեան	Ս. Լիսիցեան
Ա. Սահակեան	Մ. Քալանթարեան
Ա. Թամամշեան	Կ. Խալաթեան
Գ. Ցուրինեան	Ս. Աբովեան
Մ. Անանեան	

ՀԱՇԻՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԵՒ ԿՁՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐ. ԸՆԿ.

Փախստականների գումարների

Մինչև յուլիսի 1-ը 1915 թւի.

*) Ծանօթութիւն 14-րդ երեսում նշանակւած զանազան վայրերից ստացւած 30518 ր.—44 կոպէկից 25,000 ռուբլին ստացւած է «Հորիզոն»-ի խմբագրութեան միջոցով։

Թիֆլիսում ստացւած 54073 ր.—07 կոպէկից 3386 ր.—71 կոպէկը ստացւած է Կոմիտէի Թիֆլիսում գտնւած մի բաժակ թէյատներից իսկ մնացածը ստացւած է զանազան անձերից և հիմնարկութիւններից։

Բացի այս մինչև մարտի 20-ը ստացւած վերոյիշեալ թէյատների արդիւնքը 5433 ր.—10 կ. մտել է Կովկ. Հայոց. Բարեգործական Ընկ. դրամարկղը յօգուտ նոյն ընկերութեան միջոցներով պահւող վիրաւոր զինուորների հիւանդանոցի և այդ գումարը չի մտնում սոյն հաշի մէջ։

ՄՈՒՏՔ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷԻ և

Աբասթումանից	181	75
Աղլերից	1000	—
Ալէքսանդրովկից	51	—
Ալիղամարից	6	—
Ալլահվերդից	51	95
Ախալցխայից	220	—
Ախալքալաքից	17	—
Անապայից	569	20
Անդիժանից	10	—
Աղէքսանդրիայից	20000	—
Արլովից	400	—
Աքոռի գիւղից	3	32
Բաքւից	683	80
Բախմուտից	165	—
Բելի-Կլիուչից	10	—
Բելցից	500	—
Բուխարեստից	149	—
Բուշիրից	700	—
Բորժոմից	374	35
Բոգոսլաւից	28	—
Գանձակից	2100	—
Գլուբոկի կայարանից	345	—
Գլարսկայեա կայարանից	100	—
Գրոզնիից	2410	62
Գուդաուտից	174	26
Գորիսից	500	—
Գորիից	810	—
Դերբենդից	2440	—
Դիլիջանից	135	—
Եալտայից	500	—
Եյսկից	750	—
Փոխադրելի	35385	25

Նէբերների ժամանման ցուցակը տպած է «Հորիզոնի» №№ 33, 45, 94 և 154 յաւելուածներում։

Կ Հ Բ. ԸՆԿ. ՀԱՇԻՒԸ ԵԼՔ

Գարբերական նպաստներ Թիֆլիսում և այլ վայրերում գտնուած փախստականներին . 7528 ր. 52 կ.			
Միանուագ նպաստներ փախստականներին և հիւանդ հայ կամաւոր զինուորներին . 7110 ր. 11 կ.	14638	63	
Գնուած է շաքար, թէյ, հաց, ալիւր և այլ մթերքներ և ուղարկուած են զանազան վայրեր փախստականներին բաժանելու համար	8200	93	
Գնուած է վերմակներ, զանազան հագուստեղէններ և ուղարկուած են Ալէքսանդրապոլ, Երևան Նոր-Բայազէդ, Կարս և այլն	15952	25	
Փախստականների տեղափոխութեան ճանապարհածախսեր Հին Նախիջևանում, Մակուում, Թիֆլիսում և այլ վայրերում .	3280	55	
Բժշկական օգնութիւն, դեղեր, հիւանդանոցներ Կաղզւանում, Կարսում և Ալէքսանդրապոլում	5076	14	
Ալաշկէրտի շրջանի փախստականների տնտեսական դրութեան վերականգնման համար գնուած են սերմացու, երկրագործական գործիքներ և այլն.	14620	83	
Ընդհանուր ծախսեր — դիւանական, պօստ և հեռագիր, տպագրական, ռոճիկներ, ճանապարհածախսեր և այլն . . .	5349	39	
Փոխադրուած է Բորժոմի Կոմիտէին գաղթականներին ընդունելու համար . .	250	—	
Փոխադրուած է Կարս Խորէն եպիսկոպոսի անունով գաղթականներին նպաստելու համար	2000	—	
Փոխադրելի. .	69369	72	

ՄՈՒՏՔ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷԻ և

Փոխադրած . .	35385	25
Եւպատորիայից	500	—
Ենիքէից	500	—
Ենաքիէվից	168	—
Ենիսէյսկից	10	—
Եկատերինոդարից	99	75
Զաքաթալայից	144	19
Զիլի կայարանից	72	74
Զանազան վայրերից	30518	44
Էջմիածնից	50	—
Թիֆլիսից	54073	07
Թելաւից	400	—
Թովուզ Ղալայից	157	52
Իրկուտսկից	4369	80
Իւզովկայից	200	—
Լուգանսկից	2445	60
Լոնդոնից	2281	50
Խաբարովկայից	1825	—
Խարբինից	420	50
Խրիստոֆորովո գիւղից	207	68
Կրիմսկից	365	98
Կուշկիից	33	30
Կերչից	210	—
Կազանից	450	50
Հասկարից	50	—
Հաղրութից	40	—
Փոխադրելի . .	134978	82

Կ. Հ Բ. ԸՆԿ. ՀԱՇԻՒԸ ԵԼՔ

Փոխադրած . .	69368	72
Փոխադրուած է Իգդիրի Կոմիտէին գաղթականներին օգնելու համար . . .	1000	—
Փոխադրուած է Նախիջևան Նէ-սէ-եպիսկոպոսին պարսկահայ գաղթականներին օգնելու համար (Իսկուհի Յակոբեանի նուիրած գումարը)	1500	—
Տրուած է Ս. Թարախեանին Ալէքսանդրապօլի կոմիտէի միջոցով ալիւր գնելու համար	1000	—
Ծախսուած է Խաչ. Կարճիկեանի միջոցով Արդուինի գաղթականների օգնութեան գործը կազմակերպելու համար. . .	700	—
Տրուած է Ախալքալակի Կոմիտէի Նախագահ Շահպարոնեանին Մեսրոպ սրբազանի միջոցով	500	—
Տրուած է Կոմիտէի լիազօր Ա. Շարաֆեանին ի հաշիւ Վանի և Մանազկերտի շրջանի գաղթականների համար նշանակուած 45000 ռուբլու	44267	59
Տրուած է լիազօր Բէգզադեանին Իգդիրի գաղթականների ծախսերի համար .	500	—
Փոխադրուած է Նոր-Բայազէդ Ռուբէն վարդապետին տեղական կոմիտէի համար .	2000	—
Փոխադրուած է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ախալքալաքի ճիւղին Տանձոտի և այլ շրջանից փախած գաղթականներին օգնելու համար . . .	3000	—
Փոխադրուած է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Կարսի ճիւղին գաղթականների համար մթերքներ գնելու .	2000	—
Փոխադրելի . .	125836	31

ՄՈՒՏՔ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷԻ և

Փոխադրած . .	134978	82
Ղզլարից	2160	—
Ղաթարի հանքերից	50	—
Ղալագիայից	60	—
Ղուբայից	300	50
Ղուլալիից	47	—
Ղրղեից	50	—
Ճիաթուրուց	17	80
Մոսկվայից	10100	—
Մելիտոպոլից	2500	—
Մազանդարանից.	1024	—
Մերվից	1244	86
Մոզդոկից	1250	—
Մանգլիսից.	60	—
Մարտակերտից	20	—
Նախիջևան (նոր).	2500	—
Նախիջևան (հին).	200	—
Նովօրօսիսկից	701	78
Նուխուց	1057	—
Նորաշէնից.	40	—
Շուշուց	1000	—
Շիրվանսկի կայարանից	69	29
Շուլաւէրից	200	15
Ուստ Լաբինսկից.	200	—
Զեմքենդից	237	65
Զխարից	218	90
Զորաթանից	15	—
Զինչինից	20	—
Պետրովսկից	601	77
Պետիգօրսկից	936	82
Պենզայից.	726	10
Փոխադրելի . .	162582	44

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ՀԱՇԻՒԸ ԵԼՔ

Փոխադրած . .	125836	31		
Տրուած է լիազօր Ս. Խանոյեանին Բորչալուի գաղթականների համար. . .	569	91		
Գնուածեն Երևանի քաղաքագլուխ Սմբատ. Խաչատրեանի միջոցով փախստականների համար գերանդիներ.	688	—		
Հանգուցեալ կանչաւելու ընտանիքին մեռնուագ նպաստ	300	—		
Փոխադրուած է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Արդւինի ճիւղին տեղական գաղթականներին օգնելու համար	500	—		
Փոխադրուած է Ալէքսանդրապոլ Արտակ վարդապետին բժշկա-ազգական երկու խմբերի կարիքների համար (Մոսկվայի կոմիտէի յատուկ դումար). . . .	3000	—		
Տրուած է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Բաթումի ճիւղի նախագահ հայր Մելեան քահանային Շաւշէթի գաղթականներին օգնելու համար . .	3000	—		
Վ. Շահպարոնեանի միջոցով տրուած է Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. Ախալքալաքի ճիւղին մի վագոն ալիւր գնելու համար .	1500	—		
Տրուած է զանազան անձանց գաղթականների օգնութեան գործի համար . .	285	36	135679	58
Մնում է դրամարկղում կանխիկ դրամ 30. ին յունիսի 1915 թուի. . . .			53618	16
Փոխադրելի . .	—	—	189297	74

ՄՈՒՏՔ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷԻ և

Փոխադրած . .	162587	44
Սուխումից.	10350	04
Սկօբօլևից	100	—
Սկվիրայից.	25	—
Սղնախից	194	28
Սաչխերէթից	88	50
Սօչիից	17	20
Սուրամից	134	28
Վլադիկաւկազից	1694	02
Վանքից	26	—
Վերին Զրելանից.	50	—
Վօրոնէժից.	15	—
Տաշքենդից	1000	—
Տոմսկից	1715	50
Տեմիրգովից	17	—
Տայշեդից	66	—
Տամբովից	296	85
Ռիգայից -	28	—
Ցարսկիէ Կօլօդցիից	52	43
Ցխինվալից	281	95
Փօթիից	25	—
Փարիզից	5250	79
Քութայիսից	200	—
Քարվանսարայից.	24	80
Փոխադրելի . .	184240	08

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ՀԱՇԻՒԸ ԵԼՔ

Փոխադրած . .	—	—	189297	74
Փոխադրելի . .	—	—	189297	74

ՄՈՒՏՔ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷԻ և

Փոխադրած . .	184240	08
Օդեսսայից	3000	—
Օմահայից.	83	56
Ռսիից	26	65
Ֆէօդոսիայից	1947	45
Ռուբ.	189297	74

Կոմիտէի գանձապահ

Կ. Հ. Բ. Ընկ. գանձապահ

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ՀԱՇԻՒԸ ԵԼՔ

Փոխադրած . .	—	—	189297	74
Ռուբ.	—	—	189297	74

Գ. Ցուրինեան

Ց. Շահնազարեան

ՀՀ Ազգային գրադարան
NL0212645

43. 349